այն ծառերի թղներից ու նոներից, որոնցից մի ժամանակ քաղել ու կերել էին Արդանուշի իշխանուհիները:

Բայց Արդանուշի ամենագրաւիչ տեղը Մածալախէթի բարձունքն էր, դժոխային ժայռի, դժոխային ձորի աջ ափը որը աւելի քան 150 մետր բարձրութիւն ունի վտակի ափից եւ այս բարձրութեան ճիշտ մէջ տեղը կայ մի երկաթի դուռ, ուր անհնար է բարձրանալ ձորից, կամ ցած իջնել ժայռի գագաթից: Այդ դռնից ներս գտնուած դղեակների, ներքին դանձերի, անմահ ոգիների մասին տարածուած առասպելները շատ հետաքրքրքրութեամբ լսում էի. բայց ճար չկար այդ դռանը հասնելու:

Տասն եւ հինգ ամիս յետոյ երբ վերադարձանք Կարս, միտքս Արդանուշի այն եռուն կեանքից չէր բաժանւում, ձգտում էի նորից գնալ: Կարսի շրջակայքի Կզլ-Կայայի, Խարաբա-Քիլիսայի, Բոզ-Կալայի աշքադարեան հոկայական որմերը, Զլավուղի, Ալի-Սուլի ջերմուկները, Թիքմայի տաճարը, Կարաչայիրի դաշտը, Սողանլու լեռան թուրքմանների Զիարէթը (ուխտատեղ Զուհուրաթ խո՞ չէ), Կազանլար աղբերակը, մատաղները, դավուլ-զուռնաով թուրքմանուհիների կլոր պարը իրենց գոյնզգոյն տարազներով, սրանց ծաղիկ պարը, հողի մէջ եփւած «չորան քեբաբը» (հովական խորոված), ջեհեզով փլաւը, ձիաւոր-